

ԱՐՏԱՎԱԶՄԱՆԻ ՄԵԶ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՆ Է

Ամեն անոնք, որ ծանոթ են մեր ազգային և եկեղեցական պատմության, կկարծեն, որ ծանոթ են նույնպես այն լուսավոր իրողության, որ Հայ եկեղեցին, անշնչ ուղղության միասին քալեց հայ պետականության հետ, դառնալով անոր անբաժան մասը: Մեր պատմական հարստությանց (տիւնասթի) բոլոր շրջաններում, սկսած Արշակունյաց հարստութենէն մինչև Ռուբինյանց իշխանությունը ու դեռ մինչև վերջին ժամանակներս, պետական կամ արքունական մեր կազմակերպությունները շեղան ալիքան ազգային, որքան ազգային էր Հայ եկեղեցին: Ու այն դժբախտ դարերուն, երբ բռնման հայ պետական կյանքը դադարեցավ գոյություն ունենալն, Հայ եկեղեցին փոխարինեց զայն և դարձավ հայ ժողովրդի ամենին հարազատ և ամենին հավատարիմ խաբիսը, որուն ամբողջ կառուցեցավ հայ ժողովուրդը մեր պատմական հողերուն վրա, թե հայրենիքն դուրս, մոտիկ կամ հեռավոր, արտասահմանի գաղթավայրերում: մեջ: Վասնզի հայրենիքի գաղափարը, ազգը ապագա իրականությանց հանդեպ միշտ կենդանի ու հավատարմոր պահելու հավիտենական իղձը Հայ եկեղեցին կրցավ անշեջ պահել ու իր փայտաշեն, ողբալի մատուռները նույնիսկ բաժական եղան իրենց հովանիին տակ ամփոփելու Հայրենիքի ազատության և անոր վերելքին ցանկացող հուսակտոր գաղութները: Հայ գաղթականության ընդարձակ ծավալ ու խորություն ունեցող պատմությունը այս իրականության ամենին սրտադրեցավ փաստերը կրովանդակել: Արտասահմանի մեջ Հայ եկեղեցին, հայ գաղթականության սկզբնական տարիներն մինչև այսօր, դարձավ Հայաստանի հոգևոր կայսրությունը, այս բառին ամենին անմեղ իմաստով: Իր հայրենական հողերը անողոր պարտադրությանց տակ լքելու և հեռանալու ստիպված հայ ժողովուրդը, իր նոր բնակարանին հետ շինեց նաև իր եկեղեցին և անոր մեջ դրավ իր ծննդավայրի եկեղեցիին ու գերեզմանոցին վերցուցած ու հետք առած զգեստ ու զարդեղենները, ձեռագիր Ավետարաններն ու նարեկները, խաչքարերը: ու ինչպես որ գաղթային կայսրություն մը իր նորստաց գաղթալայրին կեդրոն ընտրած ոստանին ամենին բարձր կենտին վրա իր կայսրությունը հատկանշող

պալատը կկանգնե ու անոր վերև կգետնող իր պետական դրոշմ ու զինանիշը, այնպես ալ հայ ժողովուրդը իր նոր գաղթավայրին մեջ կանգնեց էջմիածնատիպ իր եկեղեցին ու անոր մեջ ամփոփեց իր ցեղին լավագույն զինանշանները հատկանշող իր մասունքներն ու խաչքարերը:

Ու ինչ որ ունեւ Հայրենիքը, իբր լեզու, իբր հավատք, իբր արվեստ ու մշակույթ, հայ գաղթական ժողովուրդը, աչքերը միշտ հառած ապագայի լուսավառ տեսլիքներուն, զանոնք բոլորը հավատարմորեն իր հետ տարավ, իր նոր բնակավայրին մեջ, ուր Հայ եկեղեցին ամեն տեղ, մինչև հեռավոր Խարպին ու Սուրբայա, կամ Քալիֆորնիա կամ Արժանիին, դարձավ Հայրենիքի հոգևոր դեսպանատունը կամ հյուպատոսարանը, ուր ոչ միայն աղոթեց, այլ և անոր հովանիին տակ միայն պաշտպանություն ու հոգևոր և մտավոր ազատություն գտավ, ինչպես որ օտար երկիրներու մեջ հաստատվող ունե ֆրանսացի, անգլիացի կամ հոլանդացի, հոն գոյություն ունեցող իր ազգային հյուպատոսարանը կենդանի իր սեփական հայրենիքն ու պետական տունը ու վտանգի պահուն կերթա ապաստանիլ այդ միևնույն հարկին տակ: Արտասահմանի մեջ Հայ եկեղեցին եղավ արդարև մեր ազգային հյուպատոսարանը, ամեն տեղ վայելած իր վստահության մը և իր առանձնաշնորհումներով: Կրավե միայն պահ մը աչքի առչե ունենալ մեր Հայրենիքն դուրս, արտասահմանի մեջ ամեն տեղ կառուցված հայկական փառավոր կաթողիկեները, Անթիլիասի հյուպակալ մայր տաճարն սկսյալ մինչև Մանֆավոյի ու Պուենտո Այրեսի մեջ կառուցված հայկական զմայելի տաճարները: Ու այս ճշմարտության գիտակ հայ իշխաններ ու բարերարներ ոչինչ խնայեցին արտասահմանի մեծագույն կեդրոններու ամենին հարգի պողոտաներուն վրա բարձրացնելու հայկական ճարտարապետական ոճով կաթողիկեներ, իբր մեր ազգի հոգևոր դեսպանատունները, իրենց կողքին նույնպես կառուցված Առաջնորդարաններով, իբր դիվանատունը այդ հոգևոր դեսպանատան:

Այն ձևով որ գաղթային պետական կայսրություններ, իրենց նույնիսկ հեռավոր գաղթավայրերում մեջ, իրենց ազգային հատկանիշը, իր բոլոր ստորեղբիկներով, լեզու,

արվեստ, մշակույթ և այլն, կենդանի պահել կշանան, նույնը բրազիլ, միշտ իր հոգևոր խմաստով, Հայ Եկեղեցին, առաջ ուրուհի եթե ոչ հիմնովին անհետացած, գեթ իր նրվազման հասած պիտի ըլլար արտասահմանի հայությունը:

Ու Հայ Եկեղեցին այս մեծագույն ու ազգապահպան դերին կարարտի խորհրդային Հայաստան իր հեռավոր զաւակներուն դէպի Հայրենիք փառավոր դարձը, վասնզի արտասահմանի մեջ, ամեն տեղ, Հայ Եկեղեցին հավատարմորեն կատարեց իր հոգևոր իշխանութիւնն անսխալութեամբ զերբ ու պիտի շարունակէ կատարել մինչև վերջը, գիտակցութեամբ իր ստանձնած դերին:

Բառ մը հայերեն չգիտցող ձեզիքի բերտախոս հայերու աննման փաղանգը, որ այնքան տառապագին պայմաններու տակ

29 նոյեմբեր 1947 թ.

Փարիզ

ՎԱՋԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱԼԱՅԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐ 29-ԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՃԱԿԱՏԻ ՊՈՒՔՐԵՇՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՓԱՌԱՏՈՆԻՆ, ԱՐՏԱՍԱՆԱԾ ՈՒՂԵՐՁԸ

Հայ ժողովուրդը 29 նոյեմբերի կդիմաւորէ այնպէս, ինչպէս բրիտանական Հիւստի փրկագործ հարությունը:

Այս պահուս բոլոր հայերու հոգիները ամենաազնիւ հուզեցողով կը կրկնեն ու մեր գիտակցութեան հորիզոնին վրա լուսավոր միտքը կը զոյգ, թէ հայու Հայրենիքը այլևս ապահովութեան, վերաշինութեան ու հառաջդիմութեան մեջ է:

Մենք լալ դիտենք մեր պատմությունը: Դարեր շարունակ, մինչև 1920, հայոց աշխարհը արցունքի հովիտ էր, անոր կապար երկնքին վրա գրած էր. «Այստեղ մեռած է ամեն հայ»:

Իրոք հայոց բոլոր հուշերը մնաւ հակառակ այն տեսնման մեծ պետություններու հանդիսավոր խոստումներուն և պաշտոնական հանձնառություններուն:

Եվ այն պահուն, երբ մեր ժողովուրդի դահիճը, թուրք իմպերիալիզմը, կապառնար ուսական մասին վրա ապրող հայությունն ալ ոչնչացնել, այդ պահուն ահա տեղի ունեցավ հրաշքով: Դանկեցով ազնիւ ժողովուրդ մը, որ մեզի եղբայրական ձեռք երկարեց — այդ ուս մեծ ժողովուրդն էր:

29 նոյեմբերի այսօր հրավեր մըն է նաև

զանված ըլլալով հանդերձ չէր բաժնված լուսավորչի հավատքին, քանի մը շաբաթ առաջ ուրախութեամբ մեկնեցաւ իր պապերուն հայրենիքը, մինչդեռ ասդին նմանապէս բառ մը հայերեն չսոսող, բայց Եկեղեցին բաժնվող արաբախոս կամ տաճկախոս ոչ մեկ հայ չուզեց բաժնել իր քրտախոս, բայց լուսավորչածին եղբայրներուն անպատմելի երջանկությունը:

Պետք է որ հայրենադարձի այս պատմական օրերուն, ամեն հայ անդրադառնալու բացահայտ իրողութեան և զնահատել գիտնալայն: Ի դուր չէ որ հայ ամիրաներ և բարեպաշտ հարուստներ արտասահմանի մեր գաղութները օժտեցին հայկական կաթողիկէներով, իբր հարազատ միջնաբերդը հայ ազգային ոգին»:

ուղղված աշխարհի բոլոր հայերուն, որպէսզի անոնք իրենց պապերուն սուրբ երկիրը դառնան և իրենց նոր ապագան կերտեն:

29-ը նոյեմբերի դրոշակ մըն է, որուն վրա դրված կա ազատագրումը Հայկական այն հողերուն, որոնք Արաքսին անդին տակաւին շղթաներու մեջ կ'առնուին:

Ահա թէ ինչու բոլոր հայերը անխտիր անսահման սիրով կողջունեն 29 նոյեմբերի և իրենց ծաղկած Հայրենիքին կմաղթեն խաղաղություն, բարօրություն և երջանկություն:

Ես հանում մեր Ս. Եկեղեցւոյն խոսքս կվերջացնեմ մաղթանքով մը.

Թող ամենակարողն Աստուծո և մեծ Ստալին հովանի ու պահպան ըլլան հայ ժողովրդին ու անոր հպարտ Հայրենիքին՝ Սովետական Հայկական Հանրապետության:

(«Հայաստանեան Ճակատ» 7 դեկտեմբերի 1947 թ.)

*) Մուսն հոգվածը Արտավազդ Արեւիկոպոլսի Փարիզի Բաշե տը Եպիսկոպոս մեջ Սովետական Հայաստանի 27-րդ տարեգարծի աւելի խոսած ատն կարանություն ամփոփումն է: